ԱՐԱՄԱՅԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ
ԵՐԶՆԿՅԱՆ

Ծնվել է 1879թ., Լոռու Հաղպատ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի, ապա՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, իսկ բարձրագույն կրթությունը՝ Ժնևի համալսարանում: 1906թ. խմբագրել է բոլշևիկյան <<Կայծ>>, 1915թ. դեկտեմբերից՝ սոցիալ-դեմոկրատական <<Պայքար>> թերթերը:

1916թ. ընտրվել է Թիֆլիսի քաղաքային դումայի, 1917թ. փտրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո՝ բանվորական խորհրդի, ապա՝ Անդրկովկասյան սեյմի և Հայոց ազգային խորհրդի անդամ:

1920թ. Ա. Երզնկյանը, որպես մենշևիկ-ինտերնացիոնալիստների խմբի լիազոր-ներկայացուցիչ, բանակցություններ է վարել ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի հետ՝ խումբը կոմունիստական կուսակցությանը ձուլելու համար:

1921 թվականից պատասխանատու աշխատանքներ է վարել Վրաստանում, ապա՝ Հայաստանում:

Եղել է ՀԽՍՀ հողագործության ժողկոմ (1921-1929), միաժամանակ՝ Հայաստանի օգնության կոմիտեի կենտրոնական վարչության նախագահ, Անդրֆեդերացիայի հողագործության ժողկոմ (1930), ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի առաջին տեղակալ՝ միաժամանակ 1931թ. դեկտեմբերից մինչև 1933թ. մարտը վարելով Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի պաշտոնը:

1935-1936թթ. վարել է ՀԽՍՀ կոմունալ տնտեսության ժողկոմի պաշտոնը:

1936թ. նոյեմբերին ձերբակալվել է և մահացել բանտում (1941թ.):

1961թ.հետմահու արդարացվել է: